ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աբովյանի քաղաքային մարզադաշտը հետախույզ Վահագն Արամի Թումասյանի անվամբ կոչելու վերաբերյալ հանրային բաց լսում

Ք.Աբովյան
01.11.2022թ

Սույն թվականի նոյեմբերի 1-ին, ժամը 15:00-ին, Աբովյանի համայնքապետարանի շենքում (հասցե՝ ք.Աբովյան, Բարեկամության հրապարակ, 1 շենք) նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանրային բաց լսում, Աբովյանի քաղաքային մարզադաշտը հետախույզ Վահագն Արամի Թումասյանի անվամբ կոչելու վերաբերյալ:

Հանրային քննարկման մասին հայտարարությունը տեղադրվել է Աբովյանի պաշտոնական կայքում (abovyan-kotayk.am):

Նիստին ներկա էին՝ «Քաղաքացիական Պայմանագիր» և «Հանրապետություն» խմբակցությունների ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակիցներ և այլ շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Աբովյան համայնքի ղեկավարի օգնական Դիաննա Երեմյանը ներկայացրեց Աբովյան համայնքի ավագանու «Հանրապետություն» խմբակցության առաջարկը համաձայն «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ կետի, Աբովյանի քաղաքային մարզադաշտը ՀՀ և Արցախի պաշտպանության համար 44-օրյա պատերազմում հերոսաբար զոհված հետախույզ, «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի արժանացած Վահագն Արամի Թումասյանի անվամբ կոչելու վերաբերյալ:

«Հանրապետություն» խմբակցության ավագանու անդամ Գոռ Գալստյանը ներկայացրեց իրենց խմբակցության առաջարկը՝ Աբովյան համայնքի, Աբովյան քաղաքի «Քաղաքային մարզադաշտ»-ը 44-օրյա պատերազմում զոհված, հետախույզ, Վահագն Թումասյանի անունով վերանվանելու մասին: Միաժամանակ կարևորեց, որ նա «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր է, մարտական գործողությունների ժամանակ փրկել է 82 զինվորականի կյանք և սերունդները պետք է ճանաչեն նման հերոսների:
Վահագն Թումասյանի մասին խոսեց նաև իրավունքի և կրթության ոլորտի մասնագետ Կարինե Հարությունյանը՝ «Վահագնի հրացայտ վարքագծով ամփոփվեց բոլոր մարտնչող մարտիկների վսեմ գծերը: Վահագն Թումասյանի, Վահագն Ասատրյանի և այլ հերոսների կերպարներով կերտվում և կերտվելու է մեր մեծ Հայաստանը»: Շնորհակալություն հայտնեց համայնքապետարանին հերոսներին մեծարելու համար:

Լրագրողական բարեգործական կազմակերպության ներկայացուցիչ Արմինե Պետրոսյանը իր խոնարհումն հայտնեց Վահագն Թումասյանի ծնողներին՝ հերոս որդի դաստիրակելու համար:

Վահագն Թումասյանի հայրը ներկայացրեց որդու անցած մարտական գործողությունների հերոսական ուղին:

Աբովյանի քաղաքային մարզադաշտը հետախույզ Վահագն Արամի Թումասյանի անվամբ կոչելու վերաբերյալ «Հանրապետություն» խմբակցության առաջարկը ներկաների կողմից հավանության արժանացավ:

Հանրային քննարկումների պատասխանատու և վարող՝ Դիաննա Երեմյան

Արձանագրող՝ Լիլիթ Գրիգորյան